1904 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յոյս (պատկեր), Թռչնիկներիս (Պլեշչէեւից) Ա. Յ., Ուսիր (ոտանաւոր) Հասօ, Սեւ լուսնի կին (պատկեր), Լուացարար Կ. Կ. Մելիք-Շահն., Նապաստակներ ինչպէս պրծան աղւէսից Կ. Կ. Մելիք-Շահն., Իմ ճնիկը Կ. Կ. Մելիք-Շահն., Հենզել եւ Գրետել—հէքիաթ (պատկեր), Եզեփոս—Աթ. Խնկոյեանց, Մանկական խաղեր Մելիք, Չար որսորդ (փոխադր.) Գր. Զուբարեան, Ծի-ծին (ոտանաւոր) Յ. Յակոբեան, Աստուածամայրը մսուրի առաջ (պատկերներով) Ջ. Տ.-Գ., Ս. Մեսրոպ, տառերի գիւտը (հայկ. աւանդ.) Գ. Նալբանդեան, Մոռացուած գերեզման—Տիկ. Բիւբեղ, Ճապոնական երեխաներ» (Ճապոն. ժողովրդ. հէքիաթ.) Թարգմ. Ա. Եղիգար, Անձնազոհ ընկերը (Ի. Գարբ.-Պասադովի) Ս. Յակոբեան, Հերբերտ Սպենսերի աֆորիզմներից եւ մտքերից Թարգմ. Ա. Եղիգար, Այլ եւ այլք.—Թղթի մի նոր տեսակ: Պաստառների փոխարէն պատկերազարդ բաց նամակներ: Պոստային յաղթանակ: Ընծայ Ռուզվէլտին, Զւարճալիք.—Հանելուկներ, բացատրութիւններ, Յայտարարութիւններ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՂԲԻՒՐԻ *նպատակն է հայ մատաղ սերունդը դաստիարակել, ճշմարիտ լուսաւորութեան շաւիղը նրան ցոյց տալ: Սէր դէպի բնութիւնը, գիտութիւնը և մերձաւորը* —ահա թէ ինչ է ուսուցանում ԱՂԲԻՒՐԸ: *Բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն ու արհամարհանք դէպի չարն ու վնասակարը* —ահա ԱՂԲԻՒՐԻ ուղղութիւնը: ԱՂԲԻՒՐԻ նախ ծրագիրը հնարաւորութիւն է տալիս *մեզ* ընդարձակ ծաւալով եւ բազմազան նախ բովանդակութեամբ լոյս ընծայել մեր ամսագիրը եւ օգտակար ու հետաքրքրական դարձնել այն, երբ հայերը առանց տարեկան 3 ր. իրանց բաժանորդագրութեամբ պահպանեն ԱՂԲԻՒՐԸ: Պրեմիան ստանում են *Աղբիւր-Տարազ* միեւնոյն հասցէով ստացող բաժանորդները, վճարելով 10 ր. (արտասահման 18 ր. կամ 50 ֆր.): Միայն ԱՂԲԻՒՐ 3 ր. արտ. 5 ր.: *Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:*

Հասցէն՝ Тифлисъ, Редакція жур. АГБЮРЪ, Tiflis, Caucase. Rédaction de la Revue AGBÜR.

Խմբագիր-Հրատարակիչ՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

ՏԱՐԱԶ *գեղարուեստական, գրական, գիտական, հասարակական, քննադատական* պատկերազարդ շաբաթաթերթը հրատարակւում է ՃՈԽ եւ ԸՆԴԱՐՁԱԿ ԾՐԱԳՐՈՎ: *Տարազի* նպատակը, ուղղութիւնն ու ձգտումն է հայերի մէջ տարածել ուղիղ հայեացք դէպի ԳԵՂԵՑԻԿԸ, ԲԱՐԻՆ ԵՒ ՕԳՏԱԿԱՐԸ: *Գեղարուեստ, գրականութիւն, գիտութիւնը, դաստիարակութիւն ու քննադատութիւնը* կազմում են ՏԱՐԱԶԻ հիմքը: Երկրորդական լրագրական բաժանմունքները—*յօդուած, թղթակցութիւն, հեռագիր, կառավար. կարգադրութիւն, ժամանակագրութիւն, կենսագրական, մանրապատմական, նորութիւններ, ծրագրներ, խորհրդակցութիւն և այլն՝* ՏԱՐԱԶԸ դարձնում են անհրաժեշտ թերթ ժողովրդի բոլոր խաւերի համար: Իսկ *զւարճալիք, տնային տնտեսութիւն, կար, ձև, ձեռագործ, թատրոն, երաժշտութիւն* եւ այլն աւելի են մատչելի անում ՏԱՐԱԶԸ ամեն ընտանիքի համար: ՏԱՐԱԶԻ տարեկան գինը 6 ր., արտասահման 10 ր.: ՊՐԷՄԻԱՆ ստանում են միմիայն նրանք, որոնք բաժանորդ են *Աղբիւր-Տարազին* եւ վճարել են 10 ր. (արտասահման 18 ր. կամ 50 ֆր.): *Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:*

Հասցէն՝ Тифлисъ, редакція журнала ТАРАЗЪ *կամ* Tiflis (Caucase Rédaction de la Revue TARAZ).

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

մանուկների, ծնողների եւ դաստիարակների համար

XXII ՏԱՐԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1904 Թ.

Տպարան «ՀԵՐՄԷՍ»
Тип. «ГЕРМЕСЪ» С. Назарьянца, Мадатовск. ул. № 81
ԹԻՖԼԻՍ

Дозволено цензурою Тифлисъ, 22-го Декабря 1904 года.

Ցոյս

*
* *

(ՊԼԵՇՉԷԵՒԻՑ)

Ինչու՞ էք իզուր անհանգիստ լինում իմ ներկայութեամբ, փոքրիկ թռչնիկներ, երգեցէք հանգիստ. ինչ որ ձեր սրտում Աստուած դրել է երգելու երգեր:

Թակարդ չեմ
լարիլ այգու մէջ,
դաշտում, ոչ էլ
ուրիշ տեղ ես
ձեզ որսալու. ես
էլ, թռչնիկներ,
լաւ եմ հասկա-
նում քաղցրու-
թիւնը ազատ
ապրելու:

Ա. Ց.

Ո Ւ Ս Ի Ր

—

Անցան ամռան շոգ օրերը,
Եկաւ հասաւ զով աշուն,
Դէ, շուտ վեր առ քո գրքերը,
Ուսումնարան վազիր դուն:

***

Ուսիր, մանուկ իմ սիրասուն,
Մօրդ քաղցրիկ դու լեզուն.
Այդ լեզուով էլ աղօթիր դուն,
Աստուած այդպէս է սիրում:

Հասօ

Սեւ Լեռնցի կին

Լ Ւ Ա Ց Ա Ր Ա Ր

Լուսաբացին Թիֆլիսում,
Մի մեծ կապոց իր ուսին,
Շտապելով գնում է
Լւացարար մի հայ կին։

Նա տանում է հարուստ
Կեղտոտ շորեր լւալու,
Նրա կեղտի վճարով
Չոր գլուխը պահելու։

Այդ արհեստը իր համար
Գործ է գնում այն օրից,
Երբ նա զրկւեց Թև-Թիկունք
Իր մինուճար զաւակից։

Ահա հասաւ իր տունը,
Մեծ կաթսայով ջուր դրաւ,
Կրակ վառեց օջախում
Ու կապոցը բաց արաւ։

Առաջ քաշեց տաշտակը,
Սոթտեց իրեն թևերը,
Սապոն, լեղակ պատրաստեց
Ու լւացքը սկսեց։

Ճլը՛գդ-պլը՛գդ,-ճլը՛գդ-պլը՛գդ,
Նա սապնում է եռանդով,
Կոխում շորը ջրի մէջ,
Ճմռում, հարում ձեռներով։

Եռման ջրից քերձւում է
Նրա ձեռքի թոյլ կաշին,
Կռանալուց կասես թէ
Դուրս է գալիս իր հոգին։

Բայց նա ցաւին չէ նայում,
Ճլըգդ-պլըգդ սապնում է,
Մինչև շորի բոլոր կեղտ
Ջնջւում, մաքրւում, սրբւում է։

Եւ երբ լւացքը մի առ մի
Ջուր է քաշում լեղակում,
Մզում, բակում թառ տալիս,
Չորանալուց հարթուկում,
Նրա մօտիկ դրացիք,
Հանգիստ պառկած անկողնում,
Վաղուց արդէն քնի մէջ

Երրորդ երազն են տեսնո՜ւմ։
Այսպէս խղճուկ այս կինը,
Ամիս, տարի, տարիներ
Լւացքի տակ տանջւելով՝
Անցնում է իր սև օրեր։

Ն. Ն. Մելիք. Շահնազարեան

ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐԸ ԻՆՉՊԷՍ ՊՐԾԱՆ ԱՂԻՒՍԻՑ

—

Մի անգամ ձմեռը, երեկոյեան դէմ քաղցած աղւէսը անյաջող որսորդութիւնից տուն էր վերադառնում։ Նա սաստիկ սովել էր, ուզում էր ուտել. ամբողջ օրը մի մուկ, մի քնաթաթախ ագռաւ անգամ չըկարողացաւ բռնել։ Մի հին չափարի մօտից անցնելիս՝ յանկարծ տեսաւ, որ չափարի տախտակների ետևը երկու չաղլիկ նապաստակներ կան փափուկ ձիւնի վրայ նստած։

—Ահա՜, ինչ կընչանակէ բաղդ ունենալ,—մտածեց ինքն իրեն ու չափարի ետևը թագ կացաւ։—Այժմ ես, առանց մի լաւ ընթրելու, չեմ պառկիլ քնելու։

Յետոյ չափարի ծակից նայելով՝ սկսաւ ընտրել.

—Սրանցից ո՞րն ուտեմ։

—Այն՝ որ ձախ կողմն է, մեծ է։

—Այն՝ որ աջ կողմն է, հաստլիկ է։

—Ձախը մսալի է երևում։

—Աջը կարծես թէ չաղլիկ է. Նրա բռնելն էլ հեշտ է. նա այնպէս ծանրալաշ է։

—Այո՛, բայց եթէ այժմ այս հաստին բռնեմ, այն մեծին ուրիշ անգամ չեմ կարող ձեռքս ձգել։ Չէ, այս մեծից սկսեմ, իսկ այն հաստին միշտ էլ կարող եմ բռնել։

Այս ասելով՝ աղւէսն արդէն վճռել էր մեծ Նապաստակի վրայ թռչելու, բայց յանկարծ աչքն ընկաւ հաստլիկին ու կրկին սկսաւ մտածել.

—Ա՜հ, այս հաստլիկը պէտք է որ համ մսալի լինի, համ քնքոյշ. չէ՛, սրան ուտեմ։

Հէնց այդ ժամանակ Նապաստակներն աղւէսին տեսան։ «Աղւէ՜սը, աղւէ՜սը»—ձայն տւին իրար ու քամու արագութիւնով այս ու այն կողմը փախան։

—Ա՜խ, անիրաւներ, ես պէտք է ընտրէի այն, որը մեծն է,—վճռեց աղւէսն ու փախչող Նապաստակների ետևից շրթունքները միայն լիզեց։

Փոխադր. Կ. Կ. Մելիք-Տահ.

ԻՄ ՇՆԻԿԸ

(Նւէր իմ Թամարիկին)

Իմ շնիկը բրդոտ, սիրուն
Ճերմակ նշան ճակատին,
Ամբողջ օրը վազվզում է,
Տատանելով իր ագին։

Նա լիզում է իմ ձեռները,
Երկու ոտով միշտ կանգնում,
Աչքը պլցած իմ աչքերին՝
Կասես մի բան ինձ խնդրում։

Ես տալիս եմ իմ շնիկին
Հացի պատառ կամ շաքար,
Նա ուտում է մռմռալով,
Աչքիս նայում անդադար։

Նա չէ սիրում չար տղայոց,
Միշտ հաջում է, յարձակւում
Ու բարկացած ժամանակը
Նրանց փէշը կրծոտում։

Նա բարի է, երբ որ նրան
Սիրում, շոյում են մարդիկ.
Նա քծնում է ու քսքսում,
Չէ մոռանում երախտիք։

Հաւատարիմ շնի համար
Շատ հեքիաթներ կան գրքում,
Ամենայն օր ես կարդում եմ
Ու տատիկիս միշտ պատմում։

Կ. Կ. Մելիք-Շահ.

Հէնզէլ եւ Գրէտէլ (ճէֆեաք)



Ե Զ Ե Փ Ո Ս

Քրիստոսի ծննդից դեռ վեց հարիւր տարի առաջ ապրում էր մի ստրուկ՝ Եզեփոս անունով։ Նա շատ խելացի և առակախօս մարդ էր։ Շատ առակներ և պատմւածքներ կան, որոնց վերագրում են Եզեփոսին։

Եզեփոսի կեանքի մասին քիչ մանրամասնութիւններ կան, բայց դարձեալ յայտնի է, որ նա մի այլանդակ, կուզիկ, թլիկկակազ և ծուռ ոտներով մի մարդ է եղել։

Այն ժամանակներում ստրուկները հրապարակներում և շուկաներում ծախւում էին։ Եզեփոսին Սամոս կղզին տարան ծախելու։ Այդ ժամանակ շուկայ է գալիս Կսանֆ իմաստունը, սկսում է զրուցել Եզեփոսի հետ և ուղղակի զարմանում նրա խելօքութեան վրայ։

—Դու խելացի ես,—ասաց Կսանֆը.—ես քեզ կը գնէի, բայց դու շատ այլանդակ ես։

—Իմաստունը մարդու մէջ պէտք է բանականութիւնը գնահատէ և ոչ դէմքը։

Հաւանեց Կսանֆը ստրուկին և գնեց նրան։ Ապրելով նոր տիրոջ մօտ՝ նա բոլորի ուշադրութեան առարկան եղաւ իր հնա-

բազմութեամբ, ինքնայատուկ ձևերով, նեղն ընկած դէպքերում սուր և տեղի պատասխաններ տալու շնորհիւ։

Մի անգամ ուրիշ ստրուկների հետ միասին Եզեփոսը ուղևորւեց մի հեռու ճանապարհ և խնդրեց, որ թեթև բեռը իրան տան։

—Ընտրիր ուզածդ կողովը,—ասացին նրան ընկերները։

Եզեփոսն ընտրեց հացի կողովը։

Բոլորը սկսեցին նրա վրայ ծիծաղել, որովհետև նա ծանր բեռն էր ընտրել։ Բայց ճաշին պաշարի կէսը կերան, ընթրիքի ժամանակ կողովը բոլորովին դատարկւեց։ Միւս ստրուկները տանջւում էին ծանր բեռների տակ։

Մի անգամ Կսանֆը հրամայեց, որ Եզեփոսը մի լաւ ճաշ պատրաստէ իր հիւրերի համար։ Եկան հիւրերը։ Եզեփոսը սեղան բացեց և առաջին տեսակը լեզւից կերակուր տւեց, երկրորդ անգամին էլ նոյնը, երրորդ անգամին էլ նոյն տեսակը, միայն համեմունքը փոխած։ Տէրը բարկացաւ։

—Չէ՞ որ ես քեզ ասացի լաւ բան առնես ճաշի համար. լեզւից աւելի լաւ բան չը կարողացա՞ր գտնել։

—Լեզւից աւելի լաւ բան կա՞յ աշխարհում,—պատասխանեց ստրուկը։—Լեզւով չէ՞, որ մենք արտայայտում ենք մեր մտքերը, ողջունում ենք... սովորեցնում ենք։ Լեզւով չէ՞, որ մարդիկ իրար հասկանում են։

Հռհռացին հիւրերը... հռհռաց և տէրը։

—Որ այդպէս է, վաղը մի վատ ճաշ պատրաստիր։

Հաւաքւեցին հիւրերը։ Եզեփոսը նոյնպէս լեզուներ տւեց։

—Այս ի՞նչ է,—բացականչեց Կսանֆը։

—Լեզու է,—պատասխանեց Եզեփոսը։—Դու չը հրամայեցի՞ր, որ վատ ճաշ պատրաստեմ։ Լեզւից ի՞նչ կարող է վատ լինել։ Լեզւով չէ՞, որ մենք սուտ ենք խօսում, արտայայտում ենք ամեն տեսակ կեղծաւորութիւն, հայհոյանք և զրպարտութիւն... որքա՞ն կռիւ, թշնամանք և նենգութիւն է ծնում լեզուն։

Եզեփոսի խելքը շուտով սամոսացոց ընդհանուրի ուշադրութիւնը իր վրայ դարձրեց։ Նրանք յաճախակի ստրուկի խոր-

հուրդներին էին դիմում և միանգամ էլ խնդրեցին Կսանֆից ազատութիւն տալ նրան: Կսանֆը համաձայնեց:

Շատ չանցած Լիւդացոց Կրեսոս թագաւորը դեսպաններ ուղարկեց Սամոս և հարկ պահանջեց:

Կրեսոսը ուժեղ և հարուստ թագաւոր էր: Նրա գանձերի անունը ամեն տեղ խօսում էին: Հիմա էլ շատ հարուստ մարդին կրեսոս են անւանում:

Սամոսացիք Եզեփոսի խորհրդովը մերժեցին Կրեսոսի դեսպաններին և երկար ժամանակ թէ այսպէս, թէ այնպէս ձըգձըգում էին հարկատուութեան հարցը:

Կրեսոսի խորհրդականները հասկացրին թագաւորին, որ պատճառը Եզեփոսն է, որ Սամոսացիք հարկ չեն տալիս:

Կրեսոսը պահանջեց Սամոսացիներից Եզեփոսին, հակառակ դէպքում սպառնաց նրանց պատերազմ: Սամոսացիք ասացին Եզեփոսին.

—Մենք խօմ քո երեսից կորչելու չե՛նք:

—Կերթամ,—պատասխանեց Եզեփոսը,—միայն խնդրում եմ հրաժեշտիս առթիւ լսեցէք գայլերի և ոչխարների առակը.

—Գայլերը ոչխարներին կռիւ յայտարարեցին: Ոչխարներին շներ էին պաշտպանում և այնպէս քաջութեամբ կռւում գայլերի դէմ, որ ամեն տեղ յաղթողն իրանք էին լինում: Գայլերը յայտնեցին ոչխարներին, որ իրանք հաշտութիւն են ցանկանում և համաձայն են ընդմիշտ հաշտ, բարիշ ապրելու, միայն թէ նրանք շներին իրանց ձեռքը մատնեն: Ոչխարները համաձայնեցին, շներին մատնեցին և գայլերը իսկոյն և եթ պատառոտեցին նրանց:

Այն ժամանակից սկսած իրանք էլ ընկան գայլերի ձեռքը:

*
* *

Խելքի եկան Սամոսացիք և չէին ուզում արձակել Եզեփոսին: Սակայն նա գնաց:

Կսանֆի այլանդակ ստրուկը լոյս ընկաւ Լիւդացոց հոյակապ մայրաքաղաքում՝ Սարդիում և կոպտութեամբ ընդունւեց Կրեսոսից:

—Թոյլ տուր ինձ, արքայ, մի երկու խօսք ասել,—խնդրեց Եղեփոսը։

—Ասա։

—Երեխան բռնելով մօրեխին չարչարում էր նրան։ Պատահմամբ նրա ձեռքն ընկաւ և ճպուռը։ Տեսնելով, որ ինքն էլ մօրեխի նման ոչնչանալու է՝ ճպուռը սկսեց խնդրել. «Ինձ մի սպանիր, ես հասկեր չեմ ուտում եւ երբէք քեզ վնաս չեմ հասցրել։ Ես երգում եմ անցորդների զուարճութեան համար, երգում եմ բոլորի համար եւ այդ երգերից զատ ուրիշ ոչինչ չը գիտեմ»։

Մինչև վերջը երեխան ականջ դրեց ճպուռին, խղճաց նրան և արձակեց։

—Թագաւո՛ր,—աւելացրեց Եղեփոսը,—ես էլ մինչև օրս ոչոքի վատութիւն չեմ արել։ Միթէ կարելի է ինձ յանդիմանել այն բանի համար, որպիսին է ազատ խօսիլը և չը կեղծելը։

Կրեսոսը խորը զգացւեց Եղեփոսի հեզութիւնից և նրա խելացի առակից։

—Ուզիր որ տամ... ասաց Թագաւորը։ Եղեփոսը ծունկ չոքեց Թագաւորի առաջ և խնդրեց, որ Սամոսացոց հետ հաշտուի։

Կրեսոսը յարգեց Եղեփոսի խնդիրը և նրան մի հրովարտակ տալով ուղարկեց Սամոս։ Հրովարտակում Թագաւորը գրըում էր. «Զիջանելով Եղեփոսի խնդրին եւ նրան յարգանք ցոյց տալու համար հաշտութեան դաշն եմ կապում Սամոսացիների հետ»։

Սամոսացիք Եղեփոսին շքեղ և հանդիսաւոր կերպով, ուրախութեամբ և շնորհակալութեամբ ընդունեցին։

Պատմում են, որ Եղեփոսը շատ ճանապարհորդեց, շատ երկրներ ման եկաւ և ամեն տեղ իրան խելքովը մարդկանց զարմացրեց... Վերջապէս նա եկաւ Դէյլֆի քաղաքը։

Դէյլֆիումն էր հին յունական Ապոլոն չաստուծոյ տաճարը։ Այդ տաճարի քուրմերը ամբողջ Յունաստանում մեծ յարգանք էին վայելում։ Կրեսոսն էր՝ ինչպէս աւանդութիւնն է ասում, Եղեփոսին մեծ ընծաներով ուղարկել այդ քուրմերի մօտ։

Եղեփոսը աչքի տակ առնելով այդ քուրմերին և տեսնելով նրանց մէջ միմիայն խաբէութիւն և չահասիրութիւն, անզգու-

չութեամբ յայտնեց իր կարծիքը նրանց վերաբերմամբ հետևեալ առակով․

—Մի քանի մարդիկ, զբօսնելով ծովի ափին, բարձրացան ժայռի գլուխը։ Այնտեղից տեսան, որ հեռուից մի ինչ-որ բան ջրի երեսով դէպի իրանց է գալիս։ Նրանք այնպէս էին կարծում, թէ եկողը նաւ է։ Կանգնեցին և սպասեցին նաւի գալուն։

Առարկան հետզհետէ մօտենում էր։

—Այդ նաւ չէ, այլ մակոյկ,—նկատում են սպասողները։

Լողացող առարկան աւելի և աւելի մօտեցաւ և համարեա ափին հասաւ։

—Այդ՛ մի կապոց ցախ է,—բացականչեցին դիտողները։—Արժէր այդ բանի համար իզուր ժամանակ կորցնելը։

Կան անձնաւորութիւններ, որոնք հեռուից մեծ մարդիկ են թւում, բայց երբ կը ծանօթանաս նրանց հետ, կը տեսնես ոչ մի արժանիքի տէր չեն։

Բացի այդ, Եզեփոսը վճռում է յետ տանել իր բերած ընծաները և յանձնել Կրեսոսին։ Այդ բանը դիւր չեկաւ քուրմերին և նրանք լուրջ կերպով երկիւղ կրեցին այն հանգամանքից, որ Եզեփոսը կարող է աննպաստ լուրեր տարածել, որոնք կը դցեն նրանց վարկ ու բարքը և կը կոտրեն բարի անունը ժողովրդի մէջ։ Նրանք վճռեցին Եզեփոսին սպանել։

Երբ Եզեփոսը պատրաստւում էր Դէլֆիից դուրս գալու, նրա ճանապարհորդական իրեղէնների մէջ թագցրին տաճարի ոսկեղէն անօթներից մէկը։

Նա քաղաքի սահմանից դեռ դուրս չէր եկել՝ երբ նրա յետևից հասան, մեղադրեցին գողութեան մէջ և բանտարկեցին... իսկ յետոյ դատապարտեցին մահուան։

—Ցաւում եմ նրա համար, որ ինձ դատապարտողները ոչ թէ իմաստուն և անւանի մարդիկ են, այլ չար և անիրաւ քըրմերը,—ասաց Եզեփոսը, լսելով իր դատավճիռը։ Յետոյ աւելացրեց․—Կը պատմեմ ձեզ մկան և գորտի առակը։

Մի ժամանակ մուկը, բարեկամանալով գորտի հետ, հրաւիրեց նրան իր մօտ և փառաւոր կերպով հիւրասիրեց։ Գորտն էլ՝ պարտքի տակ չը մնալու համար՝ մկանը խնդրեց ճաշի։

—Որպէս զի դու իմ յետեւից գաս ջրի միջով,—աւելացրեց նա,—ես թելով քո ոտքը իմ ոտքից կը կապեմ։

Կապեց եւ թռաւ ընկաւ ջուրը, մուկն էլ նրա յետեւից։ Սակայն մուկը խեղդւում է եւ խեղդւելուց առաջ ասում գորտին.

—Մահւանս պատճառը դու եղար։ Միայն ուժանի հատուցումը կըստանաս։

Եւ իսկապէս մկան գուշակութիւնը կատարւեց։ Արծիւը տեսնելով մկանը ջրի երեսին, վեր եկաւ, բռնեց նրան ճանկերով եւ տարաւ... Նոյնպէս գորտին, որը կապւած էր մկան ոտից։

Իմ մահն էլ այդպիսի մի փորձանք կը բերի ձեզ։

Թշւառ Եզեփոսին մի բարձր տեղից գլորեցին քարերի վրայ։

Շուտով Դէյլֆիում ժանտախտ ընկաւ։ Ամբողջ շրջակայքը մարդկանցից դատարկւեց։

—Այդ պատիժը մեր անիրաւութեան երեսից է, Եզեփոսի մահւան համար է։ Բուրմերին մենք ինչու լսեցինք,—աղաղակում էր ժողովուրդը։

Իրանց խիղճը հանդստացնելու համար Դէյլֆեցիք Եզեփոսին արձան կանգնեցրին։

Աբ. Խնկոյեան

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

I

ՖԻՇԸՄ-ՓԻՇԻՄԻ

Ֆիշըմ-Փիշիմի խաղին երկու հոգի են լինում, մինը ձեռը դնում է սեղանին, միւսը աղալում է ու ասում․

Փի՛շըմ-Փի՛շըմ, սիրուն կատու,
Մեղրը կըտամ, կարագ կըտամ,
Չամիչ կըտամ, խուրմա կըտամ,
Փի՛շտ:

Ասում է ու ձեռին խփում․ եթէ դիպչում է ձեռի երեսին, դարձեալ նոյնը շարունակում է, մինչեւ որ Փիշտ ասելուց ու ձեռը վրայ ընկնելուց նա քաշում է յանկարծ ու ձեռը սեղանին է դիպչում եւ այժմ Փիշըմ ասողն է ձեռը պահում։

Մելիք



ՉԱՐ ՈՐՍՈՐԴ

(Փոխադր․)

Մի գեղեցիկ առաւօտ էր։ Գարնան արեգակը լուսաւորում էր ամբողջ աշխարհը։ Դաշտերը ծածկւած էին բազմագոյն հոտաւէտ ծաղիկներով։ Թռչուններն ուրախ-ուրախ երգում էին թփերի վրայ և փայփայում իրենց ձագուկներին։ Մի թռչուն բռնել էր բաւականին միջատներ և դիմում էր դէպ այն թուփը, որի վրայ գտնւում էր նրա բոյնը։ Ձագուկները ուրախ-ուրախ, բերանները լայն բաց արած ճռւողում էին և անհամբեր կերպով սպասում էին համեղ պատառներին։

Սակայն յանկարծ որտեղից որ էր յայտնւեց մի որսորդ և հրացանը նշան դրաւ։ Արձակեց հրացանը և խղճուկ թռչնիկն անկենդան ընկաւ գետին։ Որսորդը մօտեցաւ, նայեց, զննեց և, անպէտք գտնելով, շպրտեց, թողնելով բնի մէջ քանի՜-քանի՜ որբիկներ։

Ասացէք խնդրեմ, ինչ է վիճակւած այդ խեղճերին։ Արդեօք այս ուրախ գարնանային եղանակը նրա՞նց ևս ուրախացնում էր։ Արդեօք որսորդը բարեխիղճ և խելօք մարդ էր և կամ թէ նա ինչ շահեց։

Գրիգոր Զուբարեան



ՃԻ՛-ՃԻՆ *)

Ձոր, գոսացած ծառի ճիւղին
Բոյն էր դրել գորշ ճի-ճին,
Ո՛րտեղից էր աշխարհ ընկել,
Ցայտնի չէր այդ ոչոքին։

Մի բիրտ, թզուկ նա բզէզ էր,
Բայց յաւակնոտ ու նեղսիրտ,
Իր գոյութեան մասին կուզէր,
Որ աշխարհը խօսի միշտ։

Ու մի օր էլ ողորմելին
Լսեց թռչնոց նըւագներ,
Հեզնեց ձայնը հէզ բըլբուլին,
Որ հիւսում էր սիր-երգեր:

Նախանձիցը ճաք-ճաք եկաւ,
Վճռեց նրան բաս բռնել **)

*) Բթաչափ մի բզէզ է, որը ժողովրդի հասկացողութեամբ ամառը ամբողջ օրով անընդհատ և միակերպ ճի՛-ճի՛... ճչալուց յետոյ, սատկում է։ Ծան. հեղ.

**) Մրցել։

Ուշք ու միտքը ողջ բնութեան
Դէպի իրեն գրաւել։

Ծի՜-ճի՜, ճի՜-ճի, ճչում էր նա,
Եւ մօնօտօն, շնչարգել,
Ծի՜... ճի՜... ճի՜... ճի՜... լսէ՛ք, ահա՛
Ես է՛լ գիտեմ նըւագել։

Եւ օրն ի բուն այնքան ճչաց,
Որ տրաքւեց մեր ճի՜-ճին.
Նախանձոտը անշնչացած
Արդէն ընկած էր գետին։

Յակոբ Յակոբեան

ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐԸ ՄՍՈՒՐՔԻ ԱՌԱՋ

Մանուկ Յիսուսը պառկած էր խանձարուրով բարուրած։ Անարատ Կոյսը՝ նանիկ ասելով՝ Նրան օրօրում էր, կարծես ջերմագին ալիքների վրայ, և յաւիտենական սիրոյ յաղթանակն էր փառաբանում։ Մանուկը, ինչպէս թռչնիկը բնի մէջ, ճռւողում էր. Մանուկը չէր քնում։ Նա խնդում էր մսուրքի մէջ՝ հրճուանքով համակուած... Սրբազան Նւագը այնքա՛ն քաղցր էր հնչում, որ Մանուկը ձայնակցում էր, թաթիկները ներդաշնակ զարնում միմեանց և նայում Կոյսին։ Իսկ Նա կանթեղի կրակը հանգցընում է։

«Քնի՛ր, իմ Մանուկ։ Այրի մէջ այնքա՛ն մռայլ է, այնքա՛ն

մութ. կէսգիշերային խաւարը վաղուց թանձրացել է, և փոթորիկը փչում է ողբաձայն: Իմ նաշխուն բալիկ, քնիր, դու յոգնել ես»:

Այսպէս կրկնում էր Անարատ Կոյսը՝ դիմելով իր Որդուն, բայց Մանուկը չէր քնում:

«Զքնաղ աչերդ փակիր, իմ հրեշտակ. փակիր աչերդ,—ու հմայական աշխարհից սքանչելի երազներ թռած կը գան քեզ մօտ»:

Սակայն մեղմ օրօրը զուր է հնչում. Մանուկը չի քնում: Եւ Սուրբ Կոյսը՝ գլուխը խոնարհեցնելով ասաց նրան.

«Խնայիր ինձ, ես լալիս եմ մորմոքող հոգուս արցունքներով,—իմ չքնաղ հրեշտակ, շուտ քնիր»:

Եւ Մանուկն իսկոյն հպաւ Անարատ Մօրը: Մանուկը քնեց...

(Ա՛լֆօնս Դոդէ՛ից) Զ. Տ.-Դ.

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԸ

(Հայկական աւանդութիւն)

—

Մենաւոր, անջա՛տ, հոգով երազուն,
Ընկած է սուրբը մթին նկուղում
Եւ միտքը պայծա՛ռ, տենչո՛տ ու արթուն՝
Լսում է բեկ-բեկ սրտի բաբախում:

Հեռու մարդկանցից՝ տկար թէ՛ հզօր,
Իր վե՛հ, սո՛ւրբ տենչը բերած այս կայան,
Արդէ՛ն վաստակած, արդէ՛ն նա անզօր,
Գրկեց փրկաբեր վերջին սուրբ նշան։

Եւ գիշեր-ցերեկ տապով, տագնապով
Սուրբն աղօթո՛ւմ է, կանչում, հառաչում.
Եւ արցունքն՝ առատ եւ փոյթ շտապով
Վեհ դէմքն է նրա թացում ու այրում:

Ձայնում է անդուլ, անվերջ աղօթում
Եւ թայո՛ւկ-դայո՛ւկ ընկնում գլխակոր,
Բայց կրկին ընդոստ կանչո՛ւմ, պաղատում
Ու կրկին նուա՛զ ընկնում քրտնաթոր...

Եւ տագնապալի՛ց, անձկո՛տ ու պապա՛կ,
Ահա՛—անաւո՜ր մի նորահրաշ —
Տեսնում է սուրբը ջինջ ու անապակ
Փայփայած լոյսը, լո՛յս կարօտամաշ...

Եւ դո՛ղ է պատում սուրբ վարդապետին.
Չը գիտէ՝ արթո՞ւն տեսիլ խաբուսիկ,
Թէ՞ երազ, անուրջ... Եւ լոյսի միջին
Շողում է շարժուն գրիչ սուրբ թաթիկ:

Եւ հոգու աչքով տեսնում է տենդոտ,—
Շողի, լոյսի մէջ, հարթ վէմի վրայ
Սուրբ թաթիկն աշխոյժ, պարզ ու անաղօտ
Գրում է հատ-հատ հայ տառերն ահա՛...

Յուզո՜ւմ է սիրտը... Սուրբ մոլեգնած՝
Ցնծանքի ճիչ է անկամ արձակում
Եւ ոգի՛ առած, նորից կեա՛նք առած,
Գրիչն է շարժում, ընդօրինակում:

Սուրբ թաթիկն աշխոյժ գրում է պայծառ.
Տառերը նման ձեան հատիկների
Նախշում են վէմը... Գրիչը մտառ
Հաւաքում է ողջ մանանան երկնի...

Եւ գանձը սրտում, սուրբը վաստակած
Սրբեց ճակատից քրտինքը մոլար.
Եւ գանձը ձեռքում, ելաւ զուարթացած՝
Տանելու կարօ՜տ, խաւա՜ր Հայ աշխարհ...

Գ. Նալբանդեան

ՄՈՌԱՑՒԱԾ ԳԵՐԵԶՄԱՆ

(Ըստ Լէանդէրի)

—

Գերեզմանատան անկիւնում կար մի մոռացուած գերեզման։ Միմիայն խոտ էր բուսել նրա վրայ, և մի քանի հատ էլ սպիտակ ու կապտաւուն վայրի ծաղիկներ էին երևում խոտերի միջից, որոնց ոչ-ոք չէր ցանել։ Այդ գերեզմանում պառկած էր ծեր ամուրին, որը իր մահուանից յետոյ չէր թողել ոչ կին, ոչ երեխաներ և ոչ մի մօտիկ անձնաւորութիւն, որը մտածէր և հոգ տանէր իր գերեզմանի համար։ Իսկ գերեզմանափորի երկու փոքրիկ երեխաները շատ էին սիրում այդ հին ու մոռացուած գերեզմանը. Նրանց թոյլատրւում էր խաղալ նրա վրայ, վազվզել, թռչկոտել, ինչքան կամենան, այն ինչ՝ մնացած գերեզմանները պահպանւում էին կարգին, մաքուր ու ծաղիկներով ծածկուած։ Այդ պատճառով էլ երեխաները չէին համարձակւում մօտենալ։

—Մանիկ,---ասաց մանչուկը՝ ծնկաչոք կանգնելով մոռաց-

ւած գերեզմանի առաջ և ինքնագոհ կերպով ցոյց տալով գերեզմանի կողքին իր փորած փոսիկը.—Մանիկ, տես, զմայլւի՛ր, ինչպիսի՜ տնակ եմ շինել այստեղ. տես ինչպէս շրջապատել եմ նախշուն քարերով և գորգ ու ծաղիկներ փռել։ Ես կը լինեմ հայրիկ, իսկ դու մայրիկ։ Բարև, մայրիկ, ի՞նչպէս են մեր երեխաները։

—Օ՛հ, Օնիկ,—ասաց աղջիկը,—դու սարսափելի շտապում ես միշտ։ Ես դեռ երեխաներ չունիմ։ Սպասի՛ր, հիմա կը ճարեմ։

Աղջիկը վազեց դէպի թփերը և շուտով վերադարձաւ մի լիքը բուռ խխունջներով։

—Ա՛յ, ահա, հայրիկ, ես արդէն ունիմ եօթը երեխաներ, եօթը սիրունիկ խխունջիկներ։

—Ուրեմն շուտով քնեցնենք նրանց, արդէն ուշ է։

Եւ պոկեցին կանաչ տերևներ, փռեցին փոսիկի մէջ ու պառկեցրին նախշունիկ բօժօժները՝ ծածկելով բոլորին մի-մի կանաչ տերևով։

—Հիմա աղմուկ չը հանես, Օնիկ,—խրատական ձևով ասաց աղջիկը,—պէտք է օրօր ասեմ երեխաներիս. դա արդէն իմ գործն է. հայրը ոչ մի անգամ օրօր չի ասում երեխաներին։ Դու կարող ես գնալ քո գործին։

Օնիկը հեռացաւ, իսկ Մանիկը երգեց քնքոյշ ու բարակ ձայնով.

Օր-օր, օր-օր, իմ բալիկներ.
Պաճիկ առէ՛ք, սիրունիկներ.
Պահէ՛ք ձեր փափլիկ թաթիկներ,
Պահէ՛ք ձեր թմբլիկ տոտիկներ,
Որ ձեզ չուտեն չար փիսիկներ։
Նանիկ ասեմ, իմ սիրունիկներ,
Քնէ՛ք, իմ նախշուն բալիկներ։

Այդ ժամանակ շարժւեց տերևը և խխունջը նրա տակից հանեց իր փոքրիկ պոզերով գլուխը։ Աղջիկը մատով խփեց նրա գլխին և ասաց.

—Բաւական է, փոքրիկ. պէտք է հանդարտւես, թէ ո՛չ։ Առաւօտն էլ չը թողիր, որ գլուխս սանրե՞մ։ Քնի՛ր շուտով. լսո՞ւմ ես։—Եւ նա կրկին երգեց.

«Օր-օր, օր-օր, իմ բալիկներ» և այլն։

Երբ նա վերջացրեց երգը, բոլոր եօթը խխունջները քնեցին—կամ գուցէ այդպէս ձևացրին։ Մինչև Օնիկի գալը Մանիկը վազեց կրկին խխունջներ որոնելու։ Նա վերադարձաւ գերեզմանի մօտ՝ գոգնոցը լիքը խխունջներով։ Օնիկն այնտեղ էր արդէն, սպասում էր նրան։

—Հայրի՛կ,—կանչեց աղջիկը.—ես էլի հարիւր երեխաներ ճարեցի։

—Է՛հ, չէ՛, կնի՛կ,—ասաց մանուկը։—Դա արդէն չափից դուրս շատ է։ Մենք ունենք միայն մի խաղալիք-ափսէ և երկու խաղալիք-պատառաքաղ։ Ի՞նչով պիտի ուտեն երեխաները։ Հարիւր երեխայ ոչոք չի ունենում։ Հարիւր անուն էլ չը կայ։ Եւ ի՛նչպէս պէտք է մկրտենք երեխաների այդ կոյտը։ Տա՛ր նրանց կորցրու։

—Է՛հ, չէ՛, Օնիկ,—աղերսանքով ասաց աղջիկը.—Աստուած է մեզ տւել, ի՞նչպէս կարող ենք չը պահել սրանց։ Բոլորն էլ հաւասարապէս սիրելի են ինձ համար։

Որովհետև արդէն ընթրիքի ժամանակ էր, գերեզմանափորի ջահել կինը բերեց երկու մեծ կտոր հաց՝ վրան կարագ քսած։ Նա համբուրեց իր երկու երեխաներին, վերցրեց նրանց, նստեցրեց գերեզմանի վրայ և ասաց.

—Տեսէք, շորերը չը կեղտոտէք։

Եւ ահա նրանք նստեցին, ինչպէս երկու ապաշնորհակներ, ու մեծ ախորժակով կերան։

Իսկ այդ բոլորը լսեց ծեր-ամուրին իր առանձնացած գերեզմանում։ Մեռածները շատ պարզ լսում են բոլորը, ինչ որ խօսւում է իրանց գերեզմանների մօտ։

Եւ յիշեց նա իր մանկութիւնը։ Նա էլ ճանաչում էր մի փոքրիկ աղջկայ. նրանք խաղում էին միասին, տնակներ էին շինում, մարդ ու կին էին լինում։ Յետոյ յիշեց մի ուրիշ ժամանակ, երբ մի անգամ էլ տեսաւ այն աղջկան, որը արդէն մեծացել էր։ Դրանից յետոյ նա այլևս ոչինչ չիմացաւ նրա մասին։ Այդ ժամանակից նա գնում էր ուրիշ ճանապարհով, և այդ ճանապարհն այնքան էլ հարթ չէր, որովհետև ինչքան երկար էր մտածում և որքան շատ էին խաղում երեխաները նրա

գերեզմանի վրայ, այնքան աւելի շատ էր տխրում նրա հոգին։ Նա լաց եղաւ ու չէր կարողանում հանդարտուել։ Երբ գերեզմանափորի կինը երեխաներին նստեցրեց նրա գերեզմանի վրայ, ուղղակի նրա կրծքին, նա չը կարողացաւ պահել իր արտասուքները։ Ծեր-ամուրին ուզում էր ձեռքերով բռնել երեխաներին ու կրծքին սեղմել։ Բայց չը կարողացաւ. նրա վրայ մի ամբողջ սաժէն հող էր լցրած, իսկ մի սաժէն հողը ծանր է, շատ ծանր։ Այդ ժամանակ նա աւելի խիստ լաց եղաւ և երկար շարունակում էր լալ, իսկ գերեզմանափորի կինը վաղուց կանչել էր երեխաներին ու քնեցրել։

Երբ միւս առաւօտը գերեզմանափորը եկաւ գերեզմանատուն, տեսաւ, որ հին, մոռացուած գերեզմանի տակից, աղբիւր է հոսում։ Այդ աղբիւրը ծեր-ամուրու արցունքներն էին։ Պայծառ ու վճիտ աղբիւրը հոսում էր գերեզմանի հողաբլրի տակի այն փոսիկից, որը երեխաները փորել էին տնակի համար։ Գերեզմանափորը ուրախ և գոհ էր, որ գերեզմանների ծաղիկները ջրելու համար ջուր կայ, և ինքն այլևս ստիպուած չի լինիլ հեռու գիւղից ջուր բերելու։ Նա ցանկապատեց աղբիւրի շուրջը և մեծ-մեծ քարերով կանոնաւոր առու շինեց։ Դրանից յետոյ այդ նոր աղբիւրից նա ջրում էր գերեզմանատան բոլոր գերեզմանները, և ծաղիկներն աւելի լաւ էին ծաղկում, քան թէ առաջ։ Նա չէր ջրում միայն այն գերեզմանը, որի տակ պառկած էր ծեր-ամուրին, որովհետև այդ գերեզմանը հին ու մոռացուած էր, և ոչոք չէր մտածում նրա մասին։ Իսկ այդ գերեզմանի վրայի վայրի ծաղիկները ծաղկում էին աւելի ճոխ ու փարթամ՝ քան միւսներինը. և գերեզմանափորի երեխաներն աւելի մեծ բաւականութեամբ էին նստում ու խաղում աղբիւրի մօտ, ջրաղացներ շինում և թղթից շինած նաւակներ բաց թողնում ջրի վրայ։

Տիկին-Բիւրեղ

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Ճապոնական ժողովրդական հէքիաթ

Սայ-Նօ-Կաւարա կոչւում է «հոգիների գետի չորացած ափը»: Խոր կերպով լեռների տակ, խոր կերպով ծովի տակ պառկած է Սայ-Նօ-Կաւարա ափը: Աւանդութիւն կայ, որ հազար տարի առաջ այդ գետի ալիքները տանում էին իրենց վրայ յաւիտենական աշխարհը երկրի վրայ մեռած մարդկանց հոգիները: Չար ոգիները բարկանում էին, երբ տեսնում էին, ինչպէս գետը իր ալիքների վրայ տանում է նրանց գաւառից բարի հոգիները. նրանք նրա ետևից խուլ անէծքներ էին փսփսում, մինչդեռ գետը օրէցօր, տարէցտարի տանում էր և տանում մարդկանց հոգիները: Սովորաբար մատաղ և քնքոյշ մանկան հոգին մաքուր, անբիծ և լուսաւոր, որպէս ձիւն, մօտենում էր ափին. այստեղ նրան հանդիպում էր լոտոսի թասանման ծաղիկը՝ պատրաստ իսկոյն մ[illegible]ագրելու այդ փոքրիկ էակին մութ խորութեան միջով յաւիտենական երանութեան աշխարհը: Չար ոգիներն այդ տեսնելիս կրճտացնում էին ատամները: Եւ իւրաքանչիւր բարի ծերուկի հոգին նոյնպէս անարգել կարող է անցնել չար ոգիների խմբի միջից և բարեյա-

ջող կերպով հրաշալի ալիքների վրայ անցնում գնում էր ան-ծանօթ աշխարհը։ Եւ այդ բանին չար ոգիները նայում էին թագցրած չարութեամբ։

Բայց վերջապէս նրանք վճռեցին փակել գետը նոյն իսկ նրա ական մօտ, և այն ժամանակ մեռածների հոգիները պէտք է արդէն դժւարութեամբ ճանապարհ բանային իրենց համար դէպի յաւիտենական երանութեան աշխարհը։

Յաւիտեան արթուն Գի-Յօ աստւածը հովանաւորում է փոքրիկ մանուկներին։

Նա ամբողջապէս լի է կարեկցութեամբ. Նրա ձայնը քնքոյշ է աղաւնիների ձայնի նման. Նրա սէրը անսահման է ծովի ջրի նման։ Երանութեան աշխարհում իւրաքանչիւր մանուկ վայելում է նրա օգնութիւնը և պաշտպանութիւնը։ Սայ-Նօ-Կաւարայում, այսինքն հոգիների գետի չորացած հեղեղատի մէջ տեղ ունեն բազմաթիւ՝ զանազան հասակների մանկական հոգիներ, երկու տարեկանից մինչև հինգ տարեկան. Նրանցից ամենից մեծերը ութը, տասը տարեկանից աւելի չեն։ Ժամանակ առ ժամանակ նրանց ողբաձայն աղաղակները հոգի են մաշում, սիրտ պատռում։ Նրանցից ոմանք ողբում են իրենց մօրը, ոմանք հօրը, միւսները եղբայրներին և քոյրերին, որոնք նրանց հետ մի ժամանակ խաղում էին։

Նրանց ողբերը տարածւում են Սայ-Նօ-Կաւարայում, մերթ զօրանալով, մերթ մեղմանալով, միակերպ և անվերջ։ Միայն լսւում են նրանց ողբալի ձայները.

«Խի-խի Կօիսի՛. խա-խա Կօիսի՛»:

Նրանց ձայները երբեմն երբեմն դառնում են խռպոտ և կոշտանում են, իսկ նրանք, այնուամենայնիւ, շարունակում են գոռալ իրենցը.

«Խի-խի Կօիսի՛. խա-խա Կօիսի՛»:

Նրանք չեն դադարում ամբողջ օրը կանչելուց և ամբողջ ժամանակ գետի յատակից քարեր են ժողովում, որոնցից զոհարանի նման մի բան են շինում, քարերը իրար վրայ դիզելով և շարունակ ասում են.

«Սիրելի մայրիկի համար ենք այդ դնում,
Հայրիկի համար սենք նոյնպէս մերը տալիս ենք

«Եւ եղբօրը քրոջ հետ չենք մոռանալ»։

Եւ առաւօտից մինչև երեկոյ կրկնում են նրանք իրենց ողբալի «խի-խի Կօխի՜, խա-խա Կօխի՜»։

Գիշերը վրայ հասնելուց չար ոգիներն իջնում են նրանց մօտ և հարցնում նրանց.

—«Ինչի՞ համար էք լաց լինում, ինչի՞ համար էք դուք աղօթում։ Ձեր ծնողները այնտեղ, երկրի վրայ, միևնոյն է՝ ձեզ չեն լսում։ Ձեր աղօթքները ձայների ալիքի մէջ կորչում են։ Ձեր ծնողները տրտնջում են երկրի վրայ, դրա համար էլ դուք տխրում, վշտանում էք»։

Եւ այս ասելով, նրանք քանդում են զոհարանները և քարերը ցիր ու ցան են անում գետի յատակի վրայ։

Այն ժամանակ մօտենում է մանուկներին Գի-Ցօ աստուածը, սիրով լի, և առնում է նրանց իր հովանաւորութեան տակ։ Ամենից փոքրերին, որոնք դեռ չեն կարողանում մանգալ, նա հրամայում է տանել իր ստորագրեալ ոգիներին։ Բոլոր մանուկները շրջապատում են նրան, և նա նրանց մխիթարում է։ Նա առնում է նրանց ձեռքերի վրայ, փայփայում է, փոխարինում նրանց մայրերին և հայրերին։

Այն ժամանակ մանուկները դադարում են լաց լինելուց և այլևս զոհարաններ չեն շինում։ Գիշերը գալիս նրանք, խաղաղ քուն են մտնում, իսկ Գի-Ցօն, յաւիտեան արթուն աստուածը, պահպանում է նրանց հանգիստը։

Թարգմ. Ս. Եղիզար



ԱՆՁՆԱԶՈՀ ԸՆԿԵՐԸ

(Ի. Գորբունով-Պասադովի)

—

Հսկայ տան շինութեան բարձունքների վրայ կանգնած էին երկու քարտաշներ, որոնցից մէկը ծեր էր, միւսը երիտասարդ։ Ներքեւում, նրանց ոտքերի տակ աղմկում էր մեծ քաղաքը, իսկ նրանց շուրջը ոլորւում և վայում էր սառն քամին։

Քարտաշները սիրով բանում էին, ուշադրութիւն չը դարձնելով ցրտին և մռնչող քամուն։ Քամին ոռնում էր գայլի նման և շարժում բարձունքները։ Վերելեակները երերւում էին և քիչ էր մնում, որ կործանուէին։ Յանկարծ քամու մի ուժգին հոսանք կործանեց բոլորը՝ վերելեակների կապերը բաժանուեցին միմեանցից և ամեն ինչ դղրդալով ցած գլորւեց։ Անվնաս մնաց միայն մի տախտակ գերանակալի հետ միասին. քարտաշները մի հնարքով կարողացան բռնել այդ տախտակից և այդպէս կախուած մնացին բարձրում, օդի մէջ...

Քամին մռնչում էր աւելի ուժգին, տախտակը ճարճատում և կորանում էր երկու մարդկանց ծանրութիւնից։ Այդ ժամանակ երիտասարդ քարտաշը ասաց ծերին.

—Երեւի մեր վերջը հասել է։ Մինչև մարդկանց օգնութեան հասնելը մենք չենք կարող կախուած մնալ տախտակից. մեզանից մէկը գուցէ կարողանայ, բայց երկուսով անկարելի է այս դրութեան մէջ մնալը։

—Տէր Աստուած,—ասաց ծերը,—ինչպէս մեռնել, ինչ կը լինի իմ երեխաների դրութիւնը։

—Երեխաներ շա՞տ ունես։

—Հինգը։

—Իսկ ես մենակ եմ։ Ես ոչինչ և ոչոքի չեմ կորցնում։ Հարց էլ չի կարող լինել թէ մեզանից ով մեռնի։ Մնաս բարով, ընկեր։

Եւ երիտասարդ քարտաշը զգուշութեամբ բաց թողեց ձեռքերը տախտակից և թռաւ դէպի ցած։ Նրա մարմինն ուժգին թափով դիպաւ սալայատակին և ջարդուփշուր եղաւ։

Իսկ ծեր քարտաշը, ընտանիքի հայրը, մնաց ողջ և անվնաս և իւր ամբողջ կեանքում երախտագիտութեան արցունքներն աչքերին յիշում էր իր անձնազոհ ընկերոջը։

Ս. Յակովբեան



ՓՈՔՐԻԿ ԵՐՒԱՆԴԸ

օքրիկ Երւանդը հայոց պատմութեան դասից գիտէր, որ Հայկազեանց իշխանութեան ընթացքում Երւանդ Սակաւակեացին յաջորդել է Տիգրան թագաւորը և որ Տիգրանը հայոց ամենալաւ թագաւորներից մէկ է եղել ժամանակին...

Փոքրիկ Երւանդը չէր մոռացել նաև իր վարժապետի այն խօսքը, թէ ժամանակակից Տիգրաններն էլ պակաս օգտակար մարդիկ չեն լինիլ իրենց հայրենիքի ու ազգի համար, եթէ աշխատեն նմանւել Երւանդեան Տիգրանին...

Փոքրիկ Երւանդը քանի մի անգամ մտքից անցրել էր, որ եթէ իր հայր Տիգրանն էլ բարի և հայրենասէր լինէր, վարժապետը պիտի գովէր նրան և տակաւին պատմութիւնների մէջ էլ պիտի յիշւէր նրա անունը...

Մի անգամ, երբոր հայր ու որդի շրջագայում էին Արաքսի ափում, որդին ասաւ հօրը.

—Սիրելի որդիս Տիգրան, եթէ դու Հայկազեանց Տիգրանի պէս բարի ու հայրենասէր լինիս, վարժապետս պիտի գովէ քեզ ու քո անունդ պիտի յիշւի պատմութիւնների մէջ...

Հայրը չը հասկացաւ փոքրիկ Երուանդի խօսքերի միտքը, բայց երբ փոքրիկ Երուանդը պատմեց նրան իր մտորումները, հայրը գրկեց իր հայրենասէր որդուն և յուզուած ձայնով ասաւ.

—Տէ՛րը օրհնէ քեզ, իմ փոքրիկ Երուանդ... Հաւատում եմ, որ եթէ քո հայ՛րը չը կարողանայ լինել Հայկազեանց Տիգրանի պէս բարի ու հայրենասէր, դու անշուշտ կը լինես մի օր այդպիսի մի Տիգրանի հայր...

Տիկ. Վարդուհի Նւոս

*
* *

(Պլեշչեևից)

Փչեց թեթեւ քամին գարնան,
Եւ ծառերը օրօրեց,
Ծառ ու ծաղիկ ուրախացան,
Որ սարերից հով փչեց:
Միայն մռայլ եւ միշտ կանաչ
Եղեւնին է լուռ կանգնած:

*
* *

Ահա եկաւ ցուրտ ձմեռը.
Սառ քամին է մռնչում,
Եւ հեծում են խեղճ ծառերը
Եւ քամու տակ ճարճատում:
Միայն մռայլ եւ միշտ կանաչ
Եղեւնին է լուռ կանգնած:

Ս. Յակոբեան

ՀԵՐԲԵՐՏ ՍՊԵՆՍԵՐԻ ՄՏՔԵՐԻՑ ԵՒ ԱՖՈՐԻԶՄՆԵՐԻՑ

—

Արդարութիւն

Տակաւին մինչև այժմ չի ճանաչուած այն բաւական ակնյայտնի ճշմարտութիւնը, որ հասարակութեան բարեկեցութիւնը և նրա հիմնարկութիւնների արդարութիւնը կախուած են նրա անդամների բնաւորութիւնից։ Առաջադիմութիւնն անհնարին է առանց բնաւորութեան կատարելութեան, որին կարելի է հասնել խաղաղ արդիւնաբերութեամբ, հասարակական կանոնաւոր կեանքի ղեկավարութեամբ։

—

Անարդար կառավարութիւնը նեցուկ է գտնում իր՝ զգացմունքների և գործողութիւնների մէջ համապատասխան չափով անարդար, ժողովրդի մէջ։ Անարդարութիւնը անհնարին է, եթէ հասարակութիւնը անարդար գործիչների որոշ քանակ չէ տալիս։

—

Արդարադատութեան սիստեմը գործօն չի կարող լինել, եթէ մարդիկ չը լաւանան։ Միայն այն ժամանակ, երբ հասարակական բարոյականութիւնը որոշ բարձրութեան կը հասնի, քաղաքացիական իշխանութիւնը բաւական զօրեղ կը լինի իր ամենահասարակ պաշտօնները կատարելու։

—

Արդարադատութեան վատ վիճակը նշանաւոր կերպով նպաստում է կեանքի ընդհանուր թանկացման։

—

Մարդկային արդարութեան օրէնքը իւրաքանչիւրին հատուցանում է բարի և չար նրա բնութեան համաձայն, որպէս նրա վարքի հետևանքը։

—

Եթէ մարդ անարդար է վերաբերւում ինքն իրեն, նա հաւասարապէս անարդար է և դէպի ուրիշները։

—

Իւրաքանչիւր օրինաւոր սոցիալական գործողութեան հիմքը արդարասիրութեան զգացմունքի մէջ է կայանում, որ հաւասարապէս անձնական և ուրիշների ազատութիւն է պահանջում։ Բայց մեր ժամանակում այդ զգացմունքը բաւականաչափ զարգացած չէ։

—

Աշխատեցէք չը հրամայել։ Հրամայեցէք միայն այն ժամանակ, երբ բոլոր ուրիշ միջոցները սպառուած են կամ անպէտք են դարձել։

—

Պետական բռնակալութիւնն ընտանեկան բռնակալութեան հետ սերտ կապերի մէջ է գտնւում։

—

Քաղաքակրթութիւնը դիպւած, պատահմունք չէ, այլ անհրաժեշտ երևոյթ։ Քաղաքակրթութիւնը արհեստական չէ, այլ բնութեան մասն է։ Ամէն ինչ զարգանում է սաղմի կամ ծաղկի նման։

—

Ամէն ոք, որ ուսումնասիրել է բնութեան օրէնքները, գիտէ, որ առանց բազմազանութեան չը կայ առաջադիմութիւն. գիտէ նոյնպէս, որ եթէ բազմազանութիւն չը լինէր, կեանքը բնաւ չէր զարգանալ։

—

Բնութեան օրէնքը թոյլ չի տալիս, որ մարդկային բարքերն ու սովորութիւնները յանկարծ փոխւեն։ Միայն դանդաղ, աստիճանական պրոցեսսը հասցընում է մշտական, յարատև արդիւնքների։

—

Երբէք պէտք չէ մոռանալ, որ օրէնքը հանգամանքների յարմարւումն է, ինչ էլ որ լինէին այդ հանգամանքները։

—

Թէև բացարձակ ճշմարտութիւնը մեր ժամանակում անհասանելի է, այնուամենայնիւ անհրաժեշտ է իմանալ, ուր է ճշմարտութիւնը, որ մեր արարքներն ուղղւէին դէպի այն, բայց ոչ թէ նրանից հեռու։

—

Կեանքի բարեշրջումը չի կարող աւարտւած համարւել, քանի մարդիկ կը խուսափեն միայն ուղղակի կամ կողմնակի վիրաւորանքներից և կամաւոր ջանքեր գործ չեն դնիլ մերձաւորի բարեկեցութիւնը հաստատելու համար։

—

Գաղափարների լեզուն դանդաղօրէն, կամաց կամաց է աճել։ Սկզբում կոպիտ, նա այժմ ճիշտ կերպով է արտայայտում ամենից նուրբ և բարդ մտքերը։ Նոյնպէս է աճում և զգացմունքների լեզուն։ Նա այժմ անկատար է։ Բայց մենք կարող ենք յուսալ, որ նա ես մի օր կարող կը լինի կենդանի և կատարեալ կերպով ուրիշին հաղորդել զանազան րոպէներում մեր զգացած զգացմունքները, յոյզերը։

—

Գիտական ճշմարտութիւններն անհրաժեշտ են և յաւիտենական։ Նրանք բոլոր ժամանակներում ամբողջ մարդկութեան են վերաբերում։ Եւ անցեալում, և ներկայում, և ամենից հեռաւոր ապագայում գիտութիւնն ունի ահագին կրթական նշանակութիւն։ Մարդիկ պէտք է ուսումնասիրեն ֆիզիքական, հոգևոր և սոցիալական կեանքի գիտութիւնը, և ամեն մի ուրիշ գիտութիւն պէտք

է հասկանալ, որպէս կեանքի գիտութեան բանալի։

—

Հաւատը դէպի բնական օրէնքը և դէպի ընդհանուր պատճառականութիւնն անգամ գիտական աշխարհի մէջ շատ էլ զօրեղ չէ, երբ հարց է գալիս կեանքի երեւոյթների մասին, և այդ հաւատը բոլորովին թոյլ է տգէտների մէջ։

—

Ցաւալի է տեսնել, թէ ինչպէս մարդիկ դատարկ բաներով են զբաղւած և անտարբեր կերպով են վերաբերւում դէպի բնութեան ամենամեծ, գերագոյն երևոյթները։ Որքան սակաւ են հետաքրքրւում նրանց երկնային մարմինները և որքան լուրջ կերպով են վիճաբանում Մարիա Ստիւարտի մասին, քննադատօրէն վերլուծում են մի որև է յունական օդա և անուշադիր են թողնում այն մեծ պօէմը, որ Աստուծոյ ձեռքը գրել է երկրագնդի վրայ։

—

Բնութիւնը հաւասարակշռում է իր բոլոր ույժերը խիստ զարմանալի տնտեսութեամբ։

Ա. Եղիզար

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Թղթի մի նոր տեսակ։ Տպագրական ու գրելու թղթի պատրաստութեան մէջ այժմ ծառը, ինչպէս յայտնի է, խիստ աչքի ընկնող դեր է խաղում։ Միմիայն շորի կտորներից կազմուած թուղթը այժմ խիստ հազուագիւտ է և այդպիսի թուղթը թանկագին է։ Զինուորական մինիստրութեան կատարած անալիզը ցոյց տուեց, որ թէև առևտրի մէջ գործարանատէրերն ու վաճառականները ներկայացնում են թուղթն ինչպէս շորից պատրաստուած, բայց իսկապէս բոլորովին մաքուր, շորէ թուղթ առևտրի մէջ համարեա չըկայ և որ այդպիսի թղթի բոլոր տեսակներին աւելի կամ պակաս չափով խառնուած է ծառի նիւթ։ Թղթի պատրաստութեան համար անհրաժեշտ ծառի նիւթի գործածութիւնն անշուշտ պիտի ազդէր անտառների դրութեան վրայ և նպաստէր նրանց համեմատաբար շուտ ջնջուելուն։ Այդ պատճառով էլ Ամերիկայում եռանդով զբաղւում են այն հարցով, թէ ինչպէս թղթի պատրաստութեան ժամանակ ծառի նիւթը փոխարինեն ուրիշ նիւթերով։ Միացեալ Նահանգների գիւղատնտեսական մինիստրութիւնն առանձին ուշադրութիւն է դարձրել այդ բանում գործ դնել բամբակի աւելորդ մասերը, մանաւանդ բամբակենու ճիւղերն ու պտուղի կճեպը, որոնք բամբակեղէնի արդիւնաբերութեան մէջ անգործադրելի են մնում, քանի որ սրա համար պիտանի է միայն մաքուր բամբակը, որը դուրս է քաշւում բամբակենու պտուղների միջից։ Ներկայումս վերոյիշեալ մինիստրութեան ձեռքով փորձեր են անում գրելու և տպագրական թուղթը պատրաստել բամբակենու այդ ճիւղերից և պտուղների փչացած կճեպներից։ Այդ փորձերը մեծ փոփոխութիւն են խոստանում գրելու և տպագրական թղթի արդիւնաբերութեան շրջանում։

Պաստառների փոխարէն պատկերազարդ բաց նամակներ։ Նամակադրոշմների մի քանի ջերմեռանդ հաւաքողներ իրանց առանձնասենեակներն ամբողջապէս կպցրել են պաստառների փոխարէն նամակադրոշմներով։ Այդ կողմից այժմ հերթն եկել է բաց պատկերազարդ նամակներին։ Սկիզբը դրուած է Ամերիկայում, ուր միլլիարդատէր Աստորը հրամայել է կպցնել իր որդու սենեակը աշխարհի բոլոր կողմերի պատկերազարդ բաց նամակներով, աշխարհագրական կարգով, այն նպատակով, որ երբ թէ հեշտացնում է նրան աշխարհագրութիւն սովորելը։ Այդպիսով Աստորը մանկավարժական նպատակ է ունեցել։ Երևի ուրիշ նպատակ է ունեցել Լօզաննում մի հիւրանոց պահող, որն իր հիւրանոցի երեք սենեակները կպցրել է պատկերազարդ բաց նամակներով։ Ինչ խօսք, որ այդ երկու օրինակները իրանց նմանողներ կունենան պատկերազարդ բաց նամակների սիրողների ու հաւաքողների շրջանում և այդպիսի բաց նամակների համար գործածւող ալբոմները աւելորդ կը լինեն։

—

Պոստային յաղթանակ։ Գերմանական պոստային վարչութիւնը յիշատակում է մի առանձին տեսակ «յաղթանակ», որ տարել են իր պոստային հաստատութիւնները Նաուհէյմում։ Այդ յայտնի կուրորտում դրուած էր մի բաց նամակ այս հասցէով. «Իմ թանկագին հարսնացու Եադվիգին, Նաուհէյմում»։ Չնայած այդ, ոչ այնքան էլ լրիւ հասցէին, Նաուհէյմի պոստը վճռեց ինչ էլ որ լինի գտնել հասցէատիրուհուն և ցրւիչների հարցուփորձերից և Նաուհէյմ եկած կանանց անուանացուցակները նայելուց յետոյ, յաջողութեամբ հասցրեց այնտեղ ապրող մի Եադվիգի այդ նամակը, որը երևաց որ ճիշտ է «ուղարկւել»։

—

Ընծայ Ռուզվելտին։ Միացեալ Նահանգների նախագահի յարգողներից մէկը մի հետաքրքիր, իսկական «ամերիկական» ընծայ է տարել նրան. դա մի ամբողջ ալբոմ է Ռուզվելտի նմանատիպերի լուսանկարներով, այսինքն այն անձնաւորութիւնների պատկերներով, որոնք արտաքուստ խիստ նման են նախագահին։ Այդ պատկերների թւում կան Ռուզվելտին այնքան նման մարդկանց պատկերներ, որ նոյն իսկ կասկած է առաջ գալիս թէ չը լինի դա հէնց ինքը Ռուզվելտն է։ Այդ մարդկանց այն մեծ քանակութիւնը, որոնք նման են նախագահին ինչպէս ջրի երկու կաթիլներ, ցոյց է տալիս «Nev-Uork Nevs»-ի կարծիքով, որ Ռուզվելտի դէմքի գծագրութիւնը իսկական ամերիկական է և որ նախագահը կարող է «ցեղի» լաւ ներկայացուցիչ համարւել։

Զ Ի Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

—

Սիրուն եւ ուշիմ պատանիներ,
Որ երջանիկ եւ անդարդ էք,
Ուրեմն լսէք ինչ եմ ասում,
Եթէ դուք լսել գիտէք։

—Մեր պապերը հին ժամանակ,
Երբ կռւում էին թշնամու հետ,
Ունէին մի գործիք-պատսպան,
Որտեղ չէր մտնում ոչ մի նետ։

Գործիքը ունի մի լաւ անուն,
Որով կոչել կարող եմ մարդուն.
Քաղցր անուն է, հաւատա,
Ամեն սրտում նա ձայն կըտայ։

Եթէ ինձ չես հաւատում,
Կարդա՛ դու մեր պատմութիւն։

---

*Երկու հարազատ են եղբայր և քոյր,
Ամեն օր միմեանց տալիս են համբոյր,
Դարերով նոքա հեռու տեղերից
Անցնում են, թռչում մեծ մեծ ժայռերից։*

*Զարմացքը սա է, որ գլուխները
Մէկ մէկից հեռի շատ մղոններով,
Իսկ նրանց անհեղ լայն բերանները
Միմեանց կպած են անթիւ դարերով։*

—

*Նա կեղևապատ էր կարճ հասակով,
Դալար ոստերով իմ մանկանոցում,
Շողշողուն, փայլուն, ջերմ արեգակով
Ցնծում էր կարմիր նա իր հանդերձում։*

Նորա գունաւոր շքեղ ոստերից
Շուտով յայտ եկին կլորակ ձեւով,
Քարշ ընկան ցածր վերին մասերից,
Տալով պարտէզին զարդ կանաչ գունով։

Բաշխեց ինձ շուտով գնդակք անհամար,
Փորերը լիքը կարմիր ակունքով,
Շատ քաղցր, համեղ, էր սննդարար
Եւ զովացուցիչ իր նուրբ քրտնքով։

Նոյեմբեր ամսաթիւ «Աղբիւրի» մէջ Ախպէրի առաջարկած երկու հանելուկները լուծելով՝ կը դնեմ ստորեւ անոնց բացատրութիւնները, որոնք եթէ ուղիղ գտնէք՝ կը զետեղէք «Աղբիւրի» յաջորդ թիւին մէջ։

Ա.

Պարոն Ախպէր, գիտեմ հաստատ՝
Ձեր որոնած բառն է Սաղմաս
Գաւառի մը երկվանկ անուն՝
Պարսկա-տաճկաց սահմաններում։

Նկատեցի՝ այդ գաւառին
Մեծ որդին էր անմահ Րաֆֆին,
Որ իր գրչով անզուգական
Սթափեցուց ազգ մեր Հայկեան։

Ապա ելայ Սալմաստ բառէն
Մէկդի դրի սկզբի Ս են,
Մնաց ձեռքս թանկգնոց ալմաս,
Որմէն զուրկ է աղքատիկ մարդ։

Բ.

Ա	մ	ե	ն		ա	յ	ն	տ
ե	ղ	մ	ա		հ	ը	մ	ի
է	Մ	ա	ր		դ	մ	ի	ա
ն	գ	ա	մ	պ	ի	տ	մ	ե
			ռ	ն	ի			
Բ	ա	յ	ց	ե	ր	ա	ն	ի
ո	ր	ի	ւ		ր	ա	գ	գ
ի	Ա	գ	ա		տ	ու	թ	ե
ա	ն	կ	գ		ո	հ	ու	ի:

Խմբագիր-հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԳԻՆԸ 7 Ր. 50 Կ.



100 ր. արժեցող ոսկէ ժամացոյցի փոխարէն առաջարկում ենք մի ժամացոյց, որը իր ձեւով և շքեղութեամբ պակաս չէ ոսկէ ժամացոյցից, իսկ մեխանիզմի լաւ յատկութեան համար երաշխաւորում ենք 8 տարով: Այս ժամացոյցը շինուած է ամերիկ. նոր ոսկուց, տղամարդունը փակ 3 խուփով, տարածուած է ամբողջ Եւրոպայում և հրապարակից կատարելապէս դուրս է հանել ոսկէ ժամացոյցները: Առաջարկում ենք ամենքին օգտւել և պատուիրել. գինը ճանապարհածախքով նշանակւած է միմիայն 7 ր. 50 կ.: Կանացինը 1 ր. աւելի: Սիբիր և Ասիական Ռուսիա ուղարկելու համար պիտի վճարել 50 կ. աւելի: Գները նշանակւած են էժան, որպէսզի ամեն ոք կարողանայ գնել: Պէտք է դիմել՝ Торгово-Экспортному Дому Парижскій Базаръ «Бо-Марше» Варшавѣ, № 56. ՁՐԻ ՊՐԵՄԻԱ ամեն մի ժամացոյցի հետ տրւում է ա) մոդային շղթայ Pancer, բ) բրելոկ-նորութիւն, գ) քսակ՝ ժամացոյցը փչացումից պահպանելու համար, դ) կաշու պորտմանէ պատւիրողի անունը հայրանունը և ազգանունը պարունակող շտեմպելով: 4—1

ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ

I. Աշխատութիւններ

- Հայոց գիրը, պատկւած մըրցանակով . . . 1 50
- Համառօտ տրամաբանութիւն 1 —
- Գերմանիայի մանկավարժական բարձրագոյն հաստատութիւնները . . . — 40
- Ներսիսեան դպրոցի առաջին դպ. ճանապարհորդութիւնը . . . . — 40
- Երկր. ճանապարհորդութիւնը — 20
- Աշակերտի յուշատետրը . — 30
- Իմ օրագիրը . . . — 25
- 8. Մագկոց (ման. պարտէզ) . — 10
- Զգացմունք. աշխարհ («Վէրք Հայաստանի»-ի մասին) . — 30
- Ե. Սպիրի. Կին վիպագիր. — 15
- Ստեփաննոս Պալասանեան . — 25
- 12. Գէորգ Բարխուդարեան—Կենսագրական և քննադատական—(Լումայ 1902 թ. № 1—5) . . . . — —
- 13. Լեօպօլդ Ժօն Ռանկէ և հայոց պատմութիւնը (Հանդէս գրակ.) . . . . — —
- Մանանին . . . . — 30
- 15. Գոշայ վանք Գոշ Մխիթարի կենսագրութեամբ . . — 40
- 16. Թէ ո՞վքեր էին Վարդանանց դաստիարակները (Հանդ. գրականական 1889) . — —
- 1500 տարի առաջ (հայոց տառերի գիւտը) . . — 20

II. Թարգմանութիւններ (գերմաներէնից).

- Պեստալոցցի, Լինհարդ և Գերտրուդ . . . 1 50
- Ժան Ժակ Ռուսօ, Էմիլ (Թարգմ. ընդարձակ առաջաբանով) . . . — 50
- Պրօֆ Ռատցէլ, Տարերք ազգագրութեան . . . — 50
- Հուքսլէյ, Բնագիտութիւն. — 40
- Նաւման, Երգրում . . — 15
- 23. Սպիրի, Վարդ Բեսլին . — 10
- » Ուռենց Յովսէփ . — 15
- » Այծարած Մօնի . — 15
- » Ալպեան հովիւ . — 20
- » Հայրենադուրկ . — 50
- Մ. Եօկայի, Ուրացողը . — 20
- Տնային բժշկարան, հրատ. Գ. Բաքեանի (I և II հատ. ամբողջ կէսը) գ. 1 ր.+ 1 ր. 60 կոպ.

Դիմել՝ Армянская Семинарія Нерсисянъ.

Исааку Арутюнянцъ.

Խ.

Открыта подписка на 1905 годъ
На ежедневную политическую, литературную и экономическую газету

„НОВОСТИ"

со 100 приложеніями.

ПОДПИСНАЯ ЦѢНА
I-го (большаго) изданія съ пересыл.
На годъ 17 р. к.— на 6 мѣс. 10 р. к.— 1 мѣс. 2 р. к.—

II-го (малаго) изданія съ пересыл.
7 рублей на годъ, 3 р. 50 к. на 6 мѣс., 1 р. 75 к. на 3 мѣс. и 60 к. на 1 мѣс.

ПОНИЖЕНІЕ ПОДПИСНОЙ ЦѢНЫ ВТОРОГО ИЗДАНІЯ ГАЗЕТЫ „НОВОСТЕЙ"
(для городскихъ подписчиковъ 6 руб. вмѣсто 10 руб для иногороднихъ 7 руб. вмѣсто 11 р.)
вызвало **ГРОМАДНОЕ РАСПРОСТРАНЕНІЕ ЕЯ.**

100 **БЕЗПЛАТНЫХЪ ПРИЛОЖЕНІЙ** 100
А ИМЕННО:

52 №№ ПЕТЕРБУРГСКАЯ ЖИЗНЬ
Еженедѣльный иллюстрированный художественный литературный журналъ.
Отдѣльн. подпис. цѣна журнала съ пересыл. на 1 годъ—6 руб., на 6 мѣс.— 3 руб, на 2 мѣс.-1 руб.

12 №№ „ЭСКУЛАПЪ"
Медико-Гигіеническое Обозрѣніе.

12 №№ „ТЕХНИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ"
(Новѣйшія открытія и изобрѣтенія, успѣхи промышленности и торговли въ связи съ успѣхами наукъ, просвѣщенія и техники).

12 №№ „ПРИРОДА И ХОЗЯЙСТВО"
(Естественныя науки, сельское хозяйство, садоводство и т п.).

12 №№ Новѣйшія Моды и Спортъ
Около 2,000 иллюстрацій.
Обширный матеріалъ по гигіенѣ и медицинѣ, домоводсту, сельскому хозяйству, техникѣ и, вообще, для цѣлей самообразованія.
Спеціальные корреспонденты и художники на театрѣ войны.

Контора газеты „НОВОСТИ", СПБ., Невскій пр., 18. Телефонъ 787.

При конторѣ газеты «НОВОСТИ» существуетъ
КНИЖНЫЙ МАГАЗИНЪ,
услугами котораго подписчики «НОВОСТЕЙ» пользуются на льготныхъ условіяхъ. Обм. 3—1